



“ՔՈՂ ՏՈՒՔ ԲԱՆՔ ՏՂՈՅՔ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ” ԴՈՒԿ. ԺԸ. 16.


ՀԱՏՈՐ ԺԱ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒՆԻՍ 1, 1882

ԹԻՒ 6

ՇԱՔԱՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Շաքարն ամենուն ծանօթ նիւթ է, բայց թէ ինչպէս յառաջ կու գայ այս նիւթը՝ գիտեն սակաւք: Արդ, շաքարը կը հանուի այլևայլ բոյսերէ կամ բանջարներէ, որոց երկու գլխաւորներն են շաքարի եղէգ և ճակընդեղը: Հոս պիտի ցուցնենք թէ ինչ է շաքարի եղէգ և շաքար ինչպէս կը հանուի անկէ: Շաքարի եղէգը երկու կամ երեք տեսակ է, որոց հասարակ տեսակը ցուցուած է մեր պատկերին վերի մասին մէջ: Երկու մեծ բուններ նկարուած կը տեսնուին պատկերին երկու դին: Տեսակ մը խոտ կամ սեղ է այս, որ անելով կը բարձրանայ վեցէ մինչև քսան սոր: Հիմա երկրի վրայ և ոչ տեղ մը վայրէ բուսած կը գտնուի այս սեղը, այլ նախ Զինացիք և Հնդկիք հասուցին զայն, և թ. դարուն շաքարի եղէգը տարուեցաւ:



Շաքարի Գործարան

Պարսկաստան: Այն թուականն են քը այս տունը տարուեցաւ Ափրիկէ, անկէ Սպանիա, և յետոյ Ամերիկա: Այս տունն յառաջ չի գար սերմէ, այլ բարունակէ կամ մատաղ սառէ ինչպէս որ թը, և կը սիրէ պարարտ գետին: Երբ եղէգը կը հասունանայ, վարի տերևները կը չորնան: Եղէգան բունը կամ ցողունն է պամպուկ պէս

ճնկակապ՝ յօղուած յօղուած, և աւելի շաքար կը գտնուի վարի յօղուածներուն մէջ: Երբ տունը պատրաստ է հնձուելու, կը կտրուի, և վերի մասը կը պահուի անկելու համար, իսկ վարի մասէն կը հանուի շաքարը, բայց թէ ինչպէս՝ տեսնենք: Նախ եղէգը կը ճմլեն աղօրոյ մէջ որ հզօր մեքենայ է ծանր երկաթի

մէջ, և կ'անցունեն քամոցէ: Այս քամուած նիւթը կը դրուի երկաթի մեծ կաթամաներու մէջ և կը զտուի կրով, ինչպէս կը տեսնուի պատկերին միջին մասին ձախակողմը, և ապա կը քամուի պարկերով որ փայտեղէն պահարաններու մէջ կը դրուին որպէս զի չպաղին շուտ: Այս կը տեսնուի պատկերին միջին մասին աջակողմը:

դաններով, որոց տակ կը եղէգան բունները կը ճմլուին և հիւթը կը քամուի դուրս: Այս հիւթը մաքրուելով այլևայլ կերպով կ'եռացունեն, ինչպէս կը տեսնուի պատկերին միջին մասին մէջ: Իսկ ջախջախուած եղէգը կը դործածուի կրով վառելիք: Երբ հիւթն ըստ բաւականին կ'ելի, կը ընուն զայն փայտեղէն ամաններու մէջ ուր կը պողի, և մեծ մասը բերեղանալով կ'ըլլայ շաքար: Առանց բերեղանալու կը մնայ մաս մը լոյծ, որ կը զտուի բերեղացեալ մասէն, դուրս ծորելով փայտեղէն ամաններուն յատակէն որ ծակ ծակ է, այնպէս որ քանի մը օր ետքը ամաններուն մէջ շաքարը միայն կը մնայ բաւական չըր, բայց թուխ և անմաքուր նիւթերով խառն, ուստի և կը ըստ զտուելու: Այս պատճառաւ կը հանցունեն կամ կը լուծեն զայն տաք ջրոյ

Պարկերէն ծորեալ հիւթը դարձեալ կը զտուի անցնելով ամիսէ, ինչպէս կը տեսնուի պատկերին ստորին մասին ձախակողմը : Յետոյ դարձեալ կ'եփեն, և երբ կու գայ բիւրեղանալու կէտը, կը լեցուի կոնաձև կաղապարներու մէջ, և այսպէս կը շինուին խանութներու մէջ վաճառուած սպիտակ չաքարի նկանները :

Նի Արիական ցեղէն ուրիշ ճիւղեր գացին Պարսկաստան, Հնդկաստան, ևն : Հնդկաստան, շատ հին ժամանակներ, գլխաւոր լեզուն էր Սանսկրիտը : Կրօնաւոր լեզուն՝ լեզուաց Արիական ճիւղէն : Սանսկրիտ լեզուն ունի շատ բառեր որ Եւրոպայի Արիական լեզուաց գրեթէ ամենուն մէջ կը գտնուին :

Ճարտնք ըրած են մեծ յառաջադիմութիւն քանի մը արուեստներու և գիտութեանց մէջ : Անոնց ահարկեան սկիզբը կը հասնի շատ կանուխ ժամանակ : Մանկուեան ցեղին որոշիչ նշանք են գեղին դոյն, ծուած աչք, լայն և ցցուած ականջք, նոյնպէս դուրս ցցուած ոսկր այտի :

ՄԱՐԿԱՅԻՆ ԱՉԳԸ

Աւետարեան մայրի թուոյն մէջ ըսինք թէ մարդկային ազգը կը բաժնուի ընդհանրապէս չինգ ցեւ, և համառօտի խօսեցանք կրօնական ցեղի վրայ : Արովհետեւ կողմասեան ցեղը բազմազոյն և կարևորագոյն ցեղն է աշխարհի, միւս ցեղերը նկարագրելէ առաջ, խօսինք այս ցեղին գլխաւոր ճիւղին վրայ, որ է Ասիական : Այս ցեղին վրայ չունինք պատմութիւն որ ցուցնէ մեզ այս ցեղին ծագումը կեդրոնական Ասիոյ մէջ, շատ յայտնի է սակայն թէ Գերմանք, Սլաւք, Յայնք, Հռոմայեցիք, Անգղիացիք ինչպէս նաև Հայք և ուրիշ շատ ազգեր ճիւղեր են կողմասեան ցեղին այս խումբին : Ասոր ապացոյց է նմանութիւնը արբեր է Յունարէնէն, նոյնպէս Հայերէնն Անգղիերէնէն : այս լեզուներն ունին սակայն շատ բառեր որ մի և նոյն աղբիւրէ են, ունին բառեր ալ որ քիչ կը տարբերին իրարմէ, թող քերականական կազմութեան նմանութիւնը որ յայտնի նշան է անոնց սկզբնական միութեան : Հաւանական է թէ նախնի Արիական ցեղէն առաջին գաղթողը եղան կելտ, որոց կը վերաբերին Իրլանտացիք, Վելշք և Պրըզոնք : Երկրորդ գաղթականութիւնը որ կ'ապսպի և Սև ծովերուն քովէն անցած կը թուի՝ եղան Յայնք և Լատինք : Երրորդ գաղթականութիւնը որ եկաւ կեղացայ ճամբով և մղեց զանոնք դէպ արևմուտք՝ Գերման ազգերուն գաղթականութիւնն էր, որում կը վերաբերին արդի Գերմանացիք, Անգղիացիք, Գանիացիք ևն : Չորրորդ ճիւղն էր Սլաւ ազգերունը, որոց կը վերաբերին Րուսք, Լեհք, Պուլիարք, այլովքն հանդերձ : վերոյիշեալ նախ-



Մանկուեան ցեւը



Ենթակուեան ցեւը

Մարդկային ազգին հինգ ցեղերուն երկրորդն է Մանկուեան : Այս ցեղէն են Չինացիք, Ճարտնք, հիւսիսային Ասիոյ ժողովուրդք, ինչպէս Լաոսիացիք և Ֆինլանտացիք, Եւրոպայի մէջ Հունկարացիք, և Եսքիմացիք ի կրինլանտ : Այս ազգերը շատ կը տարբերին իրարմէ թէ՛ կերպարանօք և թէ՛ քաղաքակրթութեամբ : Չինացիք և

Մեր պատկերը կը ցուցնէ այս այլ և այլ ցեղերը . (1) է թիւպեղցի քուրմ . (2) է Չինացի մանտարին . (3) է Մոնկոլեան թաթար . (4) է Լաբրանտացի կին . (5) է բնիկ Գամպիալացի, և (6) է Եսքիմացի : Երրորդ մարդկային ցեղն է իթովպականը : Այս ցեղին բուն նշանն է սև կամ թուխ դոյն, կարճ դանդուր հէր, լայն և տախակ քիթ, և թանձր շրթունք : Այս ցեղը կը զբառնուի մանաւանդ Ափրիկէ, թէպէտ մեծ մաս մը ասոնցմէ տարուած է Ամերիկա իբրև գերի : Մեր պատկերը կը ցուցնէ այս ցեղին այլևայլ ճիւղերէն մարդիկ, բայց թէ առանց ս'ըր ո'ր ճիւղին կը վերաբերի յիշել հարկ չէ : Այս ցեղին գրեթէ բոլոր ճիւղերն Ափրիկէի մէջ վայրենի են :

ԻՐԲԵՒ ԲՐԻՍՏՈՆԵԱՅ ԱՊՐԻԼ


Տղայ մը կամ պատանի մը որ կը յուսայ թէ սկսած է Գրիտանեական կեանք վարել, ի՞նչպէս կրնայ ուղիղ ճամբուն մէջ քաշել և մինչև վերջը իբրև Գրիտանեայ ապրիլ : Թերևս Աւետարեան ընթերցողաց մէջ կան այնպիսիներ որ այս հարցումը կ'ընեն : Այսպիսեաց կ'ըսենք թէ շատ աւելի գիւրին է բան մը սխիլ քան ի գըլուխ հանել զայն : Մարդ միանգամ միայն սիրար Գրիտանոսի տալով ամէն բան կատարած չըլլար : Սիրար Գրիտանոսի տալ սկզբնաւորութիւն է, առաջին քայլն առնել է : Բայց Գրիտանեական կեանց մէջ նոր մաներու և այն կեանքէն ի փառս երկնից ելլելու մէջ տեղ շատ քայլեր կան : Արդ, սորվելու առաջին բանը սա է թէ կարելի չէ Գրիտանեական կեանց բոլորը մէկէն վարել ըմբոստել : Ինչպէս ըսի, գծիտուս քեզ փրկիչ ընդունելով ամէն բան կատարած ըմբոստեցած չես ըլլար : Եթէ կ'ուզես ուղիղ

ճամբուն մէջ ընթացքդ շարունակել, նախ գիտնալու ես թէ ո՞րն է ուղիդ ճամբան որուն մէջ քայլել կ'ուզես : Զորօրինակ, կ'ըսես թէ Քրիստոնեայ ես : Աղէկ է որ Քրիստոնեայ ես, բայց որովհետեւ Քրիստոնեայ ես, ըսել չէ թէ կրնաս քու կենացդ մէջ անփոյթ ըլլալ : Այլ, ընդհակառակն, որովհետեւ Քրիստոնեայ ես, պարտիս զգոյշ ըլլալ որ ամէն բան ընես ինչպէս որ պէտք է : Քրիստոնեայ սղու մը չկայեւր անփոյթ ըլլալ, և այսպէս իյնալ մեղաց մէջ : Քրիստոնեայ սղու մը մեղք գործելը կը վշտացունէ զԱստուած : Ուրեմն, իբրև Քրիստոնեայ ապրելու առաջին պայմանն է գիտնալ թէ ո՞րն է քո Քրիստոսի համար ընելու բան ունիս : Աղէկ նշան է երբ կը հարցնես թէ ինչպէս կրնաս շարունակել ընթացքդ ուղիդ

միշտ սորվելու ես թէ ինչ է ուղիդ ճամբան : Այս ճամբան Սուրբ գիրքը կը ցուցնէ քեզ : Սուրբ գիրք ճարգ է մեր ոտուընթերուն և լոյս մեր շարիշներուն : Սուրբ գիրքը մի կարգաբայնպէս որպէս թէ իբրև պարտք կ'ուզես կարդալ և ըմբոսել սաչափ համարներ : Այլ կարգա Սուրբ գիրքը սորվելու համար թէ Աստուած ինչ կ'ուզէ

ՄԵՆԵՑ ԿԱՄՈՒՐՁԸ

Այս կամրջին նկարագիրը կ'ընենք ոչ թէ վաճառ գի նշանաւոր է քան զայլ կամուրջ, այլ վաճառ գի ամենէն առաջ շինուած երկաթե կամուրջներէն մին է : Այս կամուրջը շինուած է Մէնայ նեղոցին վրայ որ Անգղիոյ մէջ վալէսի և Անկասի կղզոյն մէջտեղն է, և Չէստերի և Հոյնհէտի երկաթուղոյ գիծը այս կամուրջէն կ'անցնի : Անուանի ճարտարապետն Սթիֆֆընսըն շինած է այս կամուրջը : Կը կոչուի Քրիստոնեայ կամուրջ, և է 103 ոտք վեր ջուրին երեսէն, այնպէս որ շոգեհատը և առագաստաւոր նաւը կրնան անցնիլ կամրջին տակէն : Կամուրջը կը բաղկանայ չորս կառքէ որոց երկուքը 230 ոտք երկայն են, և միւս երկուքը 439 ոտք : Յիշուելու արժանի է որ այս կամուրջին անագին մեծութեամբ քառակուսի խողովակներ են ձոյլ երկաթէ, և երկաթուղոյն կառքերը կ'անցնին այն խողովակներուն մէջէն : Իւրաքանչիւր խողովակ շինուած է ուրիշ տեղ, և յետոյ լաստերով բերուած է քարէ սիւներուն քով որ պատկերին մէջ կը տեսնուին, և ջրաշարժ մեքենաներով հանուած և գրուած է իւր տեղը որ աւելի քան հարիւր ոտք վեր է ջուրին երեսէն : Շատ մեծ կամուրջներ նոյն սկզբամբ շինուեցան այնուհետեւ : Աստուծոյ մին, այսինքն երկաթուղոյ կամուրջը Սանդ Լաւրէնս գետին վրայ Գանատայի Մոնդրէալ կոչուած տեղը, երկու միոն երկայն է : Այս կամուրջին երկաթն աւելի քան ութ միլիոն քաջ (օխս) է, իսկ քարեղէն սիւներն են աւելի քան երեք միլիոն խորանարդ ոտք :




Կամուրջ

մնալ ուղիդ ճամբուն մէջ : Երեսն որ ընես : Աստուծոյ ձայնն է որ կը խօսի քեզ Սուրբ գրոց մէջ : Քեզի համար կարևոր բանն է գիտնալ թէ

տորներն անագին մեծութեամբ քառակուսի խողովակներ են ձոյլ երկաթէ, և երկաթուղոյն կառքերը կ'անցնին այն խողովակներուն մէջէն : Իւրաքանչիւր խողովակ շինուած է ուրիշ տեղ, և յետոյ լաստերով բերուած է քարէ սիւներուն քով որ պատկերին մէջ կը տեսնուին, և ջրաշարժ մեքենաներով հանուած և գրուած է իւր տեղը որ աւելի քան հարիւր ոտք վեր է ջուրին երեսէն : Շատ մեծ կամուրջներ նոյն սկզբամբ շինուեցան այնուհետեւ : Աստուծոյ մին, այսինքն երկաթուղոյ կամուրջը Սանդ Լաւրէնս գետին վրայ Գանատայի Մոնդրէալ կոչուած տեղը, երկու միոն երկայն է : Այս կամուրջին երկաթն աւելի քան ութ միլիոն քաջ (օխս) է, իսկ քարեղէն սիւներն են աւելի քան երեք միլիոն խորանարդ ոտք :

Յետոյ յիշելու ես թէ շարունակ ուղիդ ճամբէն քայլելու համար քեզի զօրութիւն քու փրկչէդ կու գայ : Առանց Յիսուսէն շարունակ օգնութիւն ընդունելու դուն չես կրնար քայլել այն ճամբուն մէջ որ կը տանի յերկինս : Քրիստոս կ'օգնէ մեզ ամէն բանի մէջ : Թէ ինչ կերպով կ'օգնէ Քրիստոս չենք կրնար ճիշդ բացատրել, բայց ամէն հաւատացեալ վստահ է թէ օգնութիւն կ'ընդունի Քրիստոսէ :



Տեղ

Ուրեմն, յիշէ որ եթէ կ'ուզես ուղիդ ճամբէն քայլել, շարունակ օգնութիւն ընդունելու ես փրկչէն : Կրնաս այս օգնութիւնն ընդունել ինդրելով : Եւ ինդրել ըսել չէ միշտ որոշեալ ձևով մը ազօթք ընել, այլ կարօտութեանդ ատեն սրտի մտօք ուզել Աստուծոյն ինչ բանի որ պէտք ունիս :

Աստուած ինչ կ'ըսէ քեզ քու ամէնօրեայ կենացդ համար : Համառօտիւ, եթէ Աստուծոյ խօսքը կարդաս, և ինդրես Յիսուսէն օգնել քեզ ամէն օր, պիտի դանես թէ ոչ միայն սկսած ես քայլել ուղիդ ճամբէն, այլ միշտ կը մնաս ուղիդ ճամբուն մէջ : Այս է ճամբան որ կը տանի յերկինս :

Ուղիդ ճամբէն քայլելու համար ուրիշ բան մ'ալ կայ ընելու, այսինքն

կոչուած տեղը, երկու միոն երկայն է : Այս կամուրջին երկաթն աւելի քան ութ միլիոն քաջ (օխս) է, իսկ քարեղէն սիւներն են աւելի քան երեք միլիոն խորանարդ ոտք :

ՏԱՃԱՐԸ

Երբ մէկը երուսագեմի աջ կողմը Զիթենեաց լեռան վրայ կենալով նա-


յեր հին տաճարին, կը տեսնէր դայն գրեթէ այնպէս ինչպէս կ'երեւի միւս երեսի պատկերին մէջ: Միայն սինը կ'երլէ ուղղակիզի սեղանէն: Տաճարին առջև դանուած առաջին դուռն է «Գեղեցիկ» կոչուած դուռը, իսկ միւս դուռը, որ Գեղեցիկի դռնէն անդին է գրտի պատին մէջ, և կը նայի Կեղբոնի խոր ձորին վրայ, է «Ոսկեղէն» կոչուած դուռը: Պատկերին ձախ կողմը պատէն դուրս տեսնուած աշտարակներն շինուած են քաղաքին հարաւային արեւելեան ծայրն Ոբաղ լեռան վրայ: Բաւական տեղեկութիւն չունիք որ հիմա տանք տաճարին ճիշդ նկարագիրը, քանզի Երուսաղեմի կործանմանէն ի վեր անցած դարերու մէջ շատ մեծ փոփոխութիւններ եղած են, բայց հաւանական է թէ վերի պատկերը շատ նման է տաճարին այն ժամանակուան վիճակին երբ մեր Տէրը նստաւ Ձիթենեաց լեռան վրայ, և մարգարէացաւ թէ ժամանակ պիտի դայ, որ տաճարին մէջ քար քարի վրայ պիտի չմնայ:

ԸՆԴՀԱՏՅԱԼ ԱՂԲԵՐԱՎՈՐՆԵՐ

Սեւտաբերի նախընթաց թիւերուն մէջ խօսեցանք հասարակ ագրիկուլտիւրի մասն, նաև երկրին կամ հողին տեսակին վրայ ուր Արդէսեան ջրհորք կըրնան բացուիլ: Կը մնայ մեզ նկարագրել ընդհանուր կոչուած աղբերակունք, այսինքն աղբերակունք որոց ջրոյն հոսումը կանոնաւոր չէ, այլ ժամանակ մը, երկայն կամ կարճ, ջուրը կը հոսէ, և ապա ժամանակ մը կը դադրի: Այսպիսի նշանաւոր աղբեր մը Գերմանիա կը հոսէ վեց ժամ և վեց ժամ կը դադրի հոսելէ, և այսպէս է միշտ: Երուսաղեմի Աղբեր կուսին կոչուած ջրհորն այսպիսի էր, որոյ ջուրը ժամանակ ժամանակ կը դադրէր և ապա կը սկսէր հոսել: Մեկնելու համար այս երևոյթը պարտինք ենթադրել թէ այս աղբերակներուն աւազանը գետնի տակ այր է, որմէ դէպ աղբերակը նեղ անցք մը կայ սիփոն կոչուած խողովակի ձևով: Սիփոն կը կոչուի ծուռ խողովակ մը որոյ ձևը Ո գրոյն նման է: Գիտենք որ եթէ այսպիսի խողովակ մը լցուի ջրով և ապա գրուի ջրով լի ամանի մը մէջ այնպէս որ խողովակին մէկ ծայրը միտուի ջրով լցուած ամանին մէջ, և միւս ծայրը կախուի ամանին ծնօտէն դուրս, ամանին ջուրը կը սկսի խողովակին գրտի ծայրէն վազել, և կը վազէ մինչև որ ամանին ջուրն իջնէ խողովակին ներսի ծայրը:

Երբ սիփոնին գրտի ծայրէն ջուրը կը կսի հոսել, ամանին ջրոյն երեսը կ'ոտող օդին ճնշմամբ ամանին ջուրը խողովակին մէջ վեր կ'երլէ և կը հոսէ մինչև որ ջուրն իջնէ սիփոնին ներսի ծայրը:

Արդ ենթադրենք գետնին տակ այր մը զոր մեր պատկերին (b) (d) գրտերը կը ցուցնեն, ենթադրենք նաև այրէն դէպ երկրին երեսը (o) (o) գրտերով ցուցուած ձևովանցք մը որոյ ծայրը կը ցուցուի (c) գրով: Արդ, երբ քարայրը կը լցուի ջրով մինչ (d) կէտը, թէ պէտ այն կէտն այնչափ բարձր է որչափ է անցքին ծայրը (c), ջուրը չի հոսեր, վասն զի անցքին վերի կողմէս մասը կ'արգելէ անոր հոսումը: Բայց երբ ջուրն այրին մէջ կը բարձրանայ այնչափ որ կը հաւասարի անցքին կողմէս գագաթին, իսկոյն կը սկսի ջուրն հոսել, և կը հոսէ մինչև այրին ջուրը կ'իջնէ (c) (d) գիծը: Ան-



տեսն կը դադրի հոսումը մինչև ջուրն այրին մէջ կ'երլէ նորէն առաջին (b) բարձրութիւնը, և ջրոյն հոսումը նորէն կը սկսի: Այսպէս կ'երթայ յաւուաջ գործողութիւնը. այսինքն ջուրը մերթ կը հոսէ, մերթ կը դադրի հոսել. և այս դադարումը կը սկսէ այնչափ ժամանակ որչափ ժամանակ հարկաւոր է որ ջուրն այրին մէջ (d) էն մինչև (b) հասնի:

ԱՐՁԱԳԱՆԳ

Փոքրիկ տղայ մը պարտէզէն մօրը քով դալով բաւ. «Մայրիկ, այսօր պարտէզ գացի, և ինքնիրենս կը պուռայի կը կանչէի, բայց հոն տղայ մը կար որ կը ծայրէր դիս:» «Օննիկ, ինչ բաւ կ'ուզես» հարցուց մայրը: «Մայրիկ,» պատասխանեց տղայն, «ես պարտիղին մէջ ինքնիրենս 'Հ' կը կանչէի, և այն տղայն ալ 'Հ' կ'անչեց, և ասոր վրայ ես անոր հարցուցի. «Ո՞վ ես դուն,» ան ալ ինձ բասաւ. «Ո՞վ ես դուն:» Յետոյ ես այն աներևոյթ տղուն բսի. «Ինչո՞ւ դուն քեզ չես ցուցներ: Այն տղան բասաւ. «Դուն քեզ չես ցուցներ:» Ծառերուն

մէջտեղ գացի տղայն գտնելու, բայց չկրցայ, ես եկայ, և բսի. «Եթէ դուրս չգաս, գլուխդ կը ջարջարես:» Ասոր վրայ ան ալ բասաւ. «Գլուխդ կը ջարջարես:»


Տղուն այս պատմութիւնը ընդէն ետքը մայրն բասաւ. «Ո՞հ, Օննիկ, եթէ այն տղուն բսէր. «Կը սիրեմ՝ զքեզ,» նա ալ պիտի բսէր՝ Կը սիրեմ՝ զքեզ:» Ինչ որ անոր բսի, նա ալ քու խօսքդ քեզ գարձուցած է: Արդ, Օննիկ, երբ մեծնաս, պիտի տեսնես որ ինչ որ բսես ուրիշներուն, անոնք ալ նոյնը քեզ պիտի բսեն: Յիշէ սա խօսքը. «Ինչ չափով որ չափէք, ա՛նով պիտի չափուի ձեզի:»

ԱՒԵՏԱՐԵՐ

ՄԱՅԻՍ ԹՈՒՌՆ ՄԵՋ ՀՐԱՏԱՐԱՎԵԱԼ

ՀԱՆՆԵԼՈՒԿԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

4



Տախտակին վերի կողմի աջ ծայրէն դէպ ի ձախ դին չորս մաս հեռուէն սկսեալ 3 մաս կտրէ շիտակ դէպ ի վար, յետոյ 4 մաս կտրէ դէպ ի ձախ տախտակին վերի ծայրին զուգահեռական, յետոյ 3 մաս դէպ ի վար, և ապա 4 մաս դէպ ի ձախ և 3 մաս դէպ ի վար և այսպէս բոլոր տախտակը կը կտրուի ինչպէս կը տեսնուի պատկերին մէջ: Ապա աջ կողմի աւել կտրը 3 մաս վար բեր, և նոյն կտրը քաշէ չորս մաս դէպ ի ձախ այնպէս որ « դայ ք ի տեղ, ք դայ ք ի տեղ, և է դայ ք ի տեղ, և ան տեսն տախտակը կ'ըլլայ 12 մաս լայն և 12 մաս երկայն:»

ԱՒԵՏԱՐԵՐՆԵՐՈՒ ԳԻՆԵՐԸ

ԱՄՍԱԿԱՆ (Հայերէն բով, և Հ. Տահլերէն և Պարսերէն), փոսթայի ծախքով, տարին 1/4 մէծիտիէ:

Ամբիկայի Մեխոնաբաց ընկերութեան կողմէն Իմրագիր ձ. Բ. ԿՐԻՆ Ֆիլանտրոպիկ Եօզուլու, Ամբիկայի Խան

ԿՈՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. ՅԱՊՈՐ ՊՈՅԱՆԵԱՆ